ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ANUSH SHIRINYAN

THE STATISTICAL ANALYSIS AND PREDICTION OF THE SPECIFICS OF THE CRIME DEVELOPMENT IN RA

Key Words: *the level of crime, latent crimes, autocorrelation, the Durbin-Watson statistic, autoregressive modeling*

The level of crime is one of the global issues of humanity. Currently, it is penetrating deeper into various spheres of public life. The statistical characteristics of crime are considered as important components of the system of social and economic development indicators. These are key factors of ensuring national security, and their improvement contributes to the harmonious development of society and the improvement of life quality. Therefore, the statistical analysis of the specifics of the crime development in RA is an important problem, to which this article is devoted.

ԼՅՈՎԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ
Մանկ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր, ՀՊՏՀ
ՄԵՍՐՈՊ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Դասախոս, ՀՊՏՀ

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հիմնաբառեր. *դաստիարակություն, ֆիզիկական կուլտուրա, սպորտ, բարոյագիտություն, էթիկա, սպորտային արժեքներ, օլիմպիզմ, գիտակցություն, առողջություն*

Այսօր, քան երբևէ, սպորտային մանկավարժության մեջ մեծ դեր և նշանակություն ունի բարոյագիտական դաստիարակությունը երիտասարդության շրջանում: Մեծ ուշադրություն դարձնելով օլիմպիական շարժմանը՝ հոդվածում կատարվում են մի շարք առաջարկություններ և տրվում խորհուրդներ բարոյական արժեքների դաստիարակման և ամրապնդման, այդ բնագավառում գիտելիքների ձեռքբերման ուղղությամբ:

Կասկածից վեր է, որ ֆիզիկական դաստիարակության և սպորտային մանկավարժության բնագավառում բարոյագիտական դաստիարակության նորագույն ձևերի ու սկզբունքների հիմնավորումը և արմատավորումը երիտասարդության շրջանում այսօր, քան երբևէ ժամանակի հրամայական պահանջներ են: Ճիշտ և ուղղորդված աշխատանքներն այդ ուղղությամբ հնարավորություն կտան առավել խորությամբ գնահատելու ու ճանաչելու իսկական մարդկային արժեքները, ստեղծելու նոր հասարակություն, նոր երիտասարդություն՝ իր ուրույն մտածելակերպով և սովորույթներով: Հավելենք, որ դաստիարակությունը, ինքնին, նպատակաուղղված ներգործություն է մարդկանց գիտակցության և

հատկապես՝ վարքագծի դրսևորումների և սովորույթների ձևավորման վրա: Այն անձի աշխարհայացքի, բարոյական կերպարի, գեղագիտական ճաշակի, շարժումների և պահվածքի կուլտուրայի, ֆիզիկական կատարելության ձեռքբերման և առողջության ամրապնդման գիտակցական համակարգված և նպատակաուղղված գործընթաց է: Որպես հասարակական երևույթ և քաղաքակրթության բարձրագույն աստիճան՝ այն օգնում է աճող սերունդներին կյանքի նորագույն ձևերին նախապատրաստվելուն և հարմարվելուն: Եվ բոլորովին պատահական չէ, որ ժամանակակից միջազգային օլիմպիական կոմիտեի հիմնադիր բարոն Պիեռ դե Կուբերտենը, վերականգնելով հին ժամանակների օլիմպիական խաղերը, նպատակ է ունեցել օլիմպիական գաղափարները և սպորտային բարձրագույն արժեքները դարձնել երիտասարդության դաստիարակության նոր տարբերակներ: Նա դեռևս այն ժամանակ սպորտում փնտրում էր միջոցներ նոր տիպի մարդու ձևավորման և կազմավորման համար: Մարդ, որը պետք է լինի առողջ և՛ մարմնով, և՛ հոգով, լինի ազատ և ընկերական, մարդասեր և անկաշկանդ, բարի ու արդար: Այս ամենին հասնելու ձևերից են ֆիզիկական դաստիարակության ուղղորդված գործընթացը, մարզական միջոցառումները և այն մարզումները բուհերում և ուսումնական տարբեր հաստատություններում, որոնք անմիջականորեն նպաստում են երիտասարդության բարոյագիտական դաստիարակության ամրապնդմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր բազմաթիվ երիտասարդների, նույնիսկ բարձրակարգ մարզիկների շրջանում նկատվում են այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են գոռոզամտությունը, մեծամտությունը, եսասիրությունը, անկարգապահությունը, վարքագծի և պահելաձևի կուլտուրայի բացակայությունը և շատ այլ լուրջ թերություններ ու սխալներ: Շատ երիտասարդներ մատների արանքով են նայում իրենց առողջությանը՝ ֆիզիկական վարժություններով զբաղվելը համարելով ժամանակի կորուստ և ավելորդ ծանրաբեռնվածություն: Ոմանք էլ արհամարհանքով են վերաբերվում այն ընկերներին, որոնք կանոնավոր կերպով զբաղվում են ֆիզկուլտուրայով և սպորտով, մասնակցում են մարզական միջոցառումներին, հետաքրքրվում են սպորտային աշխարհով և այլն:

Նման վարքագծի դրսևորման պատճառներից հատկապես առանձնացվում են ներկայիս երիտասարդության թերի գիտելիքները բարոյական նորմերի վերաբերյալ, ինչպես նաև անկայուն դիրքորոշումը մարզական էթիկայի պահպանման նկատմամբ: Պակաս կարևոր չեն նաև համապատասխան մասնագետների թերի գիտելիքներն ու անտարբերությունը: Շատ էական է, որ հենց իրենք՝ դաստիարակներն ու մանկավարժները լինեն մեծահոգի, կարգապահ, բազմակողմանի զարգացած և, անշուշտ, զինված մասնագիտական խոր գիտելիքներով և ունակություններով: Նրանք պետք է կարողանան ուսուցանել ու արմատավորել բարոյագիտության կանոնները ոչ միայն ֆիզդաստիարակության դասերի և մարզումների ժամանակ, այլև կենցաղում՝ տանը, դրսում, հասարակության մեջ, մրցումների ժամանակ, այնտեղ, որտեղ գերակշռում են ինքնագիտակցությունը, արդարությունը և բարեկամությունը: Ցավով պետք է նշել, որ բուհական համակարգում ուսանողության շրջանում, ինչպես նաև մարզչական աշխատանքում նկատվում է գիտելիքների և

ունակությունների ոչ բավարար մակարդակ: Մինչդեռ, չպետք է մոռանալ, որ հասարակության մեջ, աշխատանքում և կենցաղում սիրվում ու հարգվում են այն մարզիչ-մանկավարժները, մարզիկներն ու մարզուհիները, որոնք ոչ միայն ինտելիգենտ են, վեհանձն, այլև, մարզական բարձր ցուցանիշների հետ մեկտեղ, ունեն բարոյական բարձր նկարագիր:

Ասվածներից հետևում է, որ սպորտային մանկավարժության բնագավառում, մասնավորապես՝ ֆիզդաստիարակության գործընթացի, մրցումների ու մարզումների ժամանակ մեծ ուշադրություն պետք է դարձնել բարոյագիտական այնպիսի նորմերի դաստիարակմանը, ինչպիսիք են.

1. ինքնագիտակցության բարձրացումը,
2. դիմացինի՝ բարեկամների և ողջ մարդկության արժեքների ճանաչումը և գնահատումը՝ որպես առանձին օբյեկտների և ինքնուրույն արժեքների,
3. մարդու ցանկությունների, նպատակների և պարտականությունների կողմնորոշումն և ինքնորոշումը,
4. ժամանակի պահանջներից ելնելով՝ բարոյականության և էթիկայի կանոնների կառուցվածքային փոփոխություններն ի շահ մարդասիրական գաղափարների պահպանման:

Հավելենք, որ նշված բոլոր խնդիրներն էլ իրենց արտահայտությունն են գտնում սպորտային մանկավարժության մեջ, քանզի սպորտի մարդկային, բարոյական ու էթիկական արժեքների դրսևորումներն ու պահպանումն իրականացվում են ավելի արտասովոր և յուրօրինակ պայմաններում:

Այս համատեքստում պետք է նշել, որ օլիմպիզմի գաղափարների սերմանումը ֆիզդաստիարակության դասաժամերի և սպորտային մարզումների ընթացքում շատ արդյունավետ է, քանզի սպորտը նպատակամղված է ոչ միայն համերաշխության ու խաղաղության պահպանմանը, այլև բարիք ստեղծելուն՝ մարդկային բարձր արժեքների ամրապնդմանը ողջ աշխարհում: Ֆիզդաստիարակության գործընթացը բուհերում միտված է նաև անձի ինքնակառավարման, հարգանքի, ինքնավստահության, առողջության ամրապնդմանը, ընկերասիրությանը, ինքնապաշտպանության ու պատասխանատվության, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատության սպորտային պատվախնդրության մակարդակի բարձրացմանը: Մասնակցելով ֆիզդաստիարակության գործնական և տեսական պարապմունքներին, մարզումներին և տարաբնույթ մրցումներին՝ երիտասարդները ձեռք են բերում մարդկային դրական և կայուն արժեքներ: Նրանց մեջ առաջանում են վեհ նպատակներ՝ ինքնահարգանք, հարգանք շրջապատի և դիմացինի նկատմամբ, ազնիվ վարքագիծ, կորպորատիվ հարաբերություններ, ինքնակառավարում և այլ դրսևորումներ:

Սպորտային մանկավարժության բնագավառում իր ուրույն տեղն է զբաղեցնում նաև արդար ու ազնիվ մրցակցության ապահովումը, որը և նախադրյալ է բարիդրացիական հարաբերությունների, համերաշխության ու բարեկամության մրցակիցների և ազգերի միջև: Հիշեցնենք, որ մարդկային պատմության ամենահին բարոյական կատեգորիանե-

ից մեկն ամփոփված է հետևյալ պարզ ձևակերպման մեջ. «Վարվիր ուրիշների հետ այնպես, ինչպես կցանկանայիր, որ նրանք վարվեն քեզ հետ»: Այս կանոնը, որը ձևավորվել է մ.թ.ա. 4- 5-րդ դարերում, հետագայում դարձավ բարոյականության «ոսկի կանոն»: Կամ ասենք՝ «Քո մրցակիցը քո ընկերն է», «Մի՛ խաբիր, մի՛ ստիր, մի՛ շնացիր» և այլ բարոյական նորմերի և պատգամների իմացությունը նույնպես թելադրում է, որ բոլոր մարդիկ հավասար են երջանկության ու արժանապատվության իրենց ձգտումներում:

Պարզ ճշմարտություն է, որ գոյություն ունեն և պետք է կյանքի կոչվեն համամարդկային այնպիսի նորմեր, որոնք ընդհանուր են բոլորի համար՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանում և ողջ աշխարհում: Հատկապես առանձնանում են բարությունն ու ազնվությունը, աշխատասիրությունն ու կարեկցանքը, հարգանքն ու նրբանկատությունը, զսպվածությունն ու հայրենասիրությունը: Եվ այս ամենն իրենց ուրույն տեղը պետք է զբաղեցնեն սպորտային մանկավարժության գործընթացում՝ երիտասարդության շրջանում:

Ակտիվ մասնակցելով դասերին, մարզումներին և սպորտային միջոցառումներին՝ երիտասարդները սովորում են ղեկավարել և օգտագործել իրենց ուժերը, ազնիվ, արդար գործունեություն ծավալել ոչ միայն սպորտում, այլև կենցաղում՝ տանը, դրսում և ամենուր: Մնում է, որ բուհական համակարգում աշխատող մարզիչ-մանկավարժները և լայն հասարակությունը լինեն ավելի կրթված՝ զինված մասնագիտական գիտելիքներով, կարողանան իրենց փորձն ու ունակությունները փոխանցել երիտասարդությանը: Միայն այս ձևով հնարավոր կդառնա ստեղծել նոր, առողջ հասարակություն՝ իր ուրույն և առաջավոր մտածելակերպով, մարդկային բարձր արժեքներով ու դրսևորումներով:

ЛЕВА САМВЕЛЯН
МЕСРОП ГУКАСЯН

ВОСПИТАНИЕ НРАВСТВЕННОСТИ В СПОРТИВНОЙ ПЕДАГОГИКЕ

Ключевые слова: *воспитание, физическая культура, спорт, нравственность, этика, олимпизм, разум, здоровье*

Сегодня, более чем когда - либо в спортивной педагогике большую роль и значимость имеет нравственно-гуманитарное воспитание молодежи в вузах страны.

Уделяя большое внимание на олимпийское движение, в работе даются некоторые советы и предложения для воспитания и укрепления основы нравственных ценностей не только во время тренировки и соревнований, но и повышения своих знаний в этой области.

LYOVA SAMVELYAN
MESROP GHUKASYAN

ETHICAL EDUCATION IN SPORTING PETAGOGICS

Key words: *education, physical culture, thinking, ethics, sporting values, Olimpism, health*

In the system of sporting petagogics education as a phenomenon and the best manifestation of human form, the ethical education has an important role and significance.

In the work attaching importance to the values of physical education and sport, Olympic ideology and to the principles of ,,Fair play,, we make a number of suggestions for the sportsmen, trainers, pedagogues, people who are interested in sport and for the society to be engaged in the inrichment of their professional knowledge.

ԱՐՄԵՆ ՔԹՈՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *կյանքի որակ, բնակչության որակ, բարեկեցություն, տարածքային անհամամասնություն, գլխավոր բաղադրիչների մեթոդ, կյանքի որակի ընդհանրական ցուցանիշ*

Բնակչության կյանքի որակի ժամանակակից հետազոտությունների տեսական հիմքն ինտեգրալային մոտեցումն է: Հոդվածում կյանքի որակը դիտարկվել է որպես բնակչության որակի, տնտեսական և սոցիալական բարեկեցության համադրություն: Դիտարկված տարրերից յուրաքանչյուրի համար կառուցվել է ընդհանրական ցուցանիշ՝ առաջին գլխավոր բաղադրիչի ձևափոխված մեթոդի կիրառմամբ: Կյանքի որակի գնահատումները կատարվել են ք. Երևանի և ՀՀ մարզերի համար, 1998-2015 թթ. վիճակագրական տվյալների հիման վրա: Գնահատման արդյունքներն օգտագործվել են ՀՀ-ում բնակչության կյանքի որակի տարածքային անհամամասնությունների վերլուծության համար:

Կյանքի որակի ընդհանրական գնահատումներում կարևորագույն խնդիրներ են ելակետային ցուցանիշների կազմի ընտրությունն ու հարաբերական կարևորությունն արտացոլող կշռային գործակիցների ստացումը: Այս խնդիրների լուծման տարբերակներից մեկը վիճակագրությունում հայտնի առաջին գլխավոր բաղադրիչի ձևափոխված մեթոդն է[1], որի հիման վրա իրականացրել ենք Երևանի և ՀՀ մարզերի բնակչության կյանքի որակի գնահատում՝ ըստ երեք հիմնական ուղղությունների՝ բնակչության որակ, տնտեսական բարեկեցություն, սոցիալական բարեկեցություն:

Բնակչության որակի համաթիվը: Ցուցանիշների առաջին խումբը, որ դիտարկել ենք, առնչվում է ժողովրդագրական, առողջապահական և կրթական ոլորտներին: Ըստ այդմ՝ պայմանականորեն կարելի է համարել, որ դրանք բնորոշում են մարզերում բնակչության որակը: Աղյուսակ 1-ում ներկայացված են «բնակչության որակ» խմբում ընդգրկված 12 ցուցանիշ և դրանց կշռային գործակիցները, որոնք ստացվել են վերը նկարագրված մեթոդաբանությամբ:

---

[1] Айвазян С.А. Сравнительный анализ интегральних характеристик качества жизни населения субъектов РФ. М.: ЦЭМИ РАН, 2001, 344 с.